ծաղկի գներով վաճառել կամ յիշել գրամաբերներից 25%-ով պարտք անել։

—

Մեզ գրում են ՄԵՂՐԻ գիւղից, որ թանգութեան պատճառով աւազակութիւնները օրըստ օրի բազմանում են։ Օրդուբաթի գաւառի բնակիչներն կառավարութիւնից ուղարկված փոքր բանակներին, կարձանցնելք ես ստացան իրանց յարձիներ։ Երբ այդ ոգորկիները ուրախացած չեռ էին գտնում, որ նոյն փոքրով իրանց քաղցած ընտանիքների համար հաց առնեն, թուրք աւազակները յարձակվում են նրանց վրա, և բոլորովին կոտորում են։ Օրդուբաթի ոստիկանութիւնը կարծում է չեռ իսկ կարձնացիների մէկ ջոկն միայն, և գողերից մէկին կալանաւորում է, իսկ մնացածները փախչում են։

—

ՇՈՒՇՈՒՑ մեզ հաղորդում են, որ ալիւրի պուդը արժէ 4 բուբլի։ Քաղաքի հայ բնակիչներից մինչև 500 ընտանիք համարեա թէ ուտեստի պակաս չունեն։ Կազմվել է մի քանի պարոններից երկու հոգաբարձութիւն, որոնք ամեն ջանքեր գործ են դնում, որ աղքատ ընտանիքների ապրուստի միջոցներ թեթեացնեն, իրանք անձամբ պտտում են աղքատների տները նրանց վիճակից տեղեկութիւն ստանալու համար, թէ օրական որքան հաց է հարկաւոր տալ։

—

Մեզ հաղորդում են ԲԱԳԴԱՐԲԱՆԴՈՒՑ, որ զանազան գիւղերում յայտնվել է անասունների հիւանդութիւն և մեծ թիւով կոտորվում են։ Այլ և մի քանի տեղերում ժողովրդի մէջ երեւում են տիֆի նշաններ։

—

Մեզ գրում են ՎԱՌԵՆԻԱՎԱՆԻՑ, որ Ասորաքանի վիճակաւորը, համաձայն Սինոդի անդրանութեան տուփարեր է ուղարկել վիճակի բոլոր քահանաներին սովելոց օգնութեան համար փոխ ժողովելու։ Մեր կարծիքով լաւ է, եթէ այն քաղաքներում և գիւղերում, ուր արդէն կատարված է կամ արդէն չարունակվում հանգանակութիւնը, տուփարներ չը տրվեն, և տուածները յետ պահանջվեն։ Թող նրանք, որոնք սկսել են հանգանակութիւնը իրանք էլ չարունակեն իրանց սկսածը։ Եթէ ոչ, ով գիտէ այդ տուփարները երբ կը վերադառնան Ասորաքան, այնտեղից երբ կերթան Լիմիսին և յետոյ Ասուտան գիտէ թէ երբ կը հասնեն վանական։

—

ԳԱՆՁԱԿԻՑ մեզ գրում են, «Հոգեւոր իշխանութեան հրամանով ս. Յակոբանց եկեղեցու միաբան քահանաները ժողովեցին յոգուտ Վանի սովալուների 170 ր.։ որ գումարը հոգեւոր կառավարութեան միջոցաւորութեամբ ուղարկվել է կոնստանդնուպոլիս։ Նուիրատուներից չատերը վրդովվել են փոքր կոնստանդնուպոլիս ուղարկելու համար, քանի որովհետև նրանցից չատերը տուել են այն պայմանով, որ «Վանից մէջտեղ ուղարկվի»։

—

ԳԱՆՁԱԿՈՒՄ ինչպէս մեզ գրում են, օրից օր այդ քաղաքում գողութեան թիւը չատանում է, գողերը աւելի հայի եռեից են մտնում։ Ջարդածները կամ պիւռ է կամ թիսան հաց է։

—

Մեզ գրում են ԳԱՆՁԱԿԻՑ որ այդտեղ ցորենի գինը իջաւ։ Այժմ ցորենը ծախվում է պուդը 3 բ. 60 կ., գարին 3 բ. 40 կ., բրինձը 3 բ. 80 կ.։

—

ԱԿՈՒԼԻՍԻՑ մեզ գրում են որ այժմ ապուխտները հարկադրված են փոստայով ալիւր բերել տալ Թիֆլիսից մէկ երկու պուդաներով։

—

Ստացանք ԵՐԵՒԱՆԻՑ պ. Խանզատեանից 224 բ. 10 կ., որ գումարը հասցրեց մեզ Թիֆլիսում պ. Եսայեր Դաւիթով։ Երեի այդ փոքր նուիրատուութեամբ է հաւաքված, բայց նուիրատուների ցուցակը դեռ չենք ստացել։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՆԳԼԻԱ

«Голосъ» լրագրի մէջ տպված է հետեւեալ առաջնորդող յօդուածը։

Ինչպէս երեւում է անգլիական ազատամիտ կուսակցութեան ազդեցութիւնը ապահոված է։ Մինչև ապրիլի 2-ի ընտրութիւնները ազատամիտների ձեռք են բերել 67 նոր տեղեր, իսկ պահպանողականները միայն 18։ Այդ-պէս ազատամիտ կուսակցութեան դէմ օգտագործված 49 տեղեր են, ուրեմն մի տեղ պահ-կա է, որ 50 ընտանի և այն ժամանակ կանհետանայ պահպանողական կուսակցութեան մեծամասնութիւնը։ Որովհետև շոտլանդական Նահանգներում (51) դեռ ընտրութիւններ չեն եղել և այնտեղ էլ ազատամիտները գռենում 10 նոր տեղեր ձեռք կը բերեն և որովհետև Անգլիայի և Ուելսի մի քանի ընտրական գիւղական շրջաններում նոքա յոյս ունեն յաղթել պահպանողականներին, ուրեմն ազատամիտները կարող են ապագով լինել, որ նոր պարլամենտի մէջ նոքա մեծամասնութիւն կը կազմեն։ Բիկոնսֆիլդի մինիստրութեան անկումն գրեթէ անփոփոխելի է։ Այս բոլորը ի նկատի ունենալով աւելորդ չէ նկարագրել ազատամիտ կուսակցութեան ընտրողական պրոգրամի յատկանիշները։

Այդ պրոգրամի մէջ գլխաւոր տեղ են բռնում արտաքին քաղաքականութեան հարցերը և գլխաւորապես Արեւելեան հարցը։ Ազատամիտները ուզղակի յայտնեցին, որ ընտրութիւնները պէտք է վճռեն, արդեօք երկրի բաւական է արեւելեան այն քաղաքականութենից, որին հետեւում էր լորդ Բիկոնսֆիլդ 1876 թուականից։ Պահպանողականները չընդդիմացան և իրանց համար յաղթութիւն էին նախագուշակում, որովհետև հաւատացած էին, որ երկրին հաւանութիւն կը տայ այդ ուղղի վերաբերութեամբ ունեցած իրանց քաղաքականութեան։ Ներկայ ընտրութիւնների հետեւանքները ցոյց են տալիս, որ նոքա սխալվում էին։ Պատասխանը բացասական էր։ Ինչպէս երեւում է, ազգաբնակների մեծ մասը անբաւական է պահպանողական կառավարութեան արեւելեան քաղաքականութենից։

Բացի այդ, ազատամիտները իրանց առաջնորդ մարկիզ Հարտինգտոնի բերանով յայտնեցին, որ իրանց կուսակցութեան մինիստրութիւնը Արեւելքում բոլորովին ուրիշ քաղաքական պրոգրամի կը հետեւի։ Մարկիզ Հարտինգտոն բացարձակ յայտնում է, որ ազատամիտ կառավարութիւնը չէ պահպանի Թիւրքիային, եթէ Դուռը արմատական վերափոխումներ չէ մտցնի երկրի վարչութեան մէջ, այլ ընդհակառակը այդ կառավարութիւնը կը ձգտի ընդհանուր Եւրոպական համաձայնութիւն կայացնել այն հարցի վերաբերութեամբ, թէ Եւրոպական Թիւրքիայում ինչով փոխարինվի անուղղելի Թիւրքիայի իշխանութիւնը։ Ազատամիտների ընտրական պրոգրամի այս մասը շատերին չափազանց համարձակ երեւաց և մի քանիները վախենում էին, որ ազատամիտ կուսակցութեան առաջնորդի այդ խիստ յայտնութիւնը կը վախեցնի չափաւոր ազատամիտ ընտրողների մի մասին։ Այս կասկածներն էլ չարդարացան։ Մարկիզ Հարտինգտոնի արեւելեան քաղաքականութեան պրոգրամը ազատամիտ ընտրողներից ոչ ոքի չը վախեցրեց։

Մի և նոյն ժամանակ սա ամենամտադատ ու և կասկածելի կէտ էր ընդդիմադրական կուսակցութեան ընտրողական պրոգրամի մէջ։ Միւս կէտերի վերաբերութեամբ նոքա համարձակ կարող էին յոյս դնել ընտրողների օգնութեան վրա, որովհետև այս վերջինները չափազանց անհանգիստ էին վերջին տարիների պատերազմական ամեն տեսակ պատահարների, առևտրի և արդիւնաբերութեան անկման, դեմոնստրացիոն պատրաստակամ և կառավարութեան անգործունէութեամբ ներքին հարցերի վերաբերութեամբ։ Պահպանողականները այդ հանգամանքը շատ լաւ հասկանում էին և այդ պատճառով կրկնում էին, որ Բիկոնսֆիլդի մինիստրութիւնը վերականգնեց Դիզրաելի—Դերբիի ազատամիտ մինիստրութեան շնորհիւ կորցրած Անգլիայի ազդեցութիւնը Եւրոպայի վրա և որ Բիկոնսֆիլդի կառավարութիւնը Եւրոպական խաղաղութեան միակ գրաւականն է։ Վերև ասվածները կարծում ենք բաւական են ազատամիտ կուսակցութեան պարտաքին և ներքին քաղաքականութեան մասին մի գաղափար կազմելու համար, եթէ կառավարութիւնը այդ կուսակցութեան ձեռքը ընկնի։

ՆԱՄԱԿ ԹԻՒՐՔԻՑԻՑ

—

Վան, 13/25 փետրվար

Այս տարի բնութիւնն ալ խիստ կը վարուի վանցիներու հետ։ երկար ժամանակէ ի վեր նեմը չը տեսնուած սոսկալի ցուրտ կանէ։ Մի կողմէն սաստիկ ցուրտը, միւս կողմէն ալ սաստիկ սովը անգործ մնացած թշուառները խղճալի դեռ չեն սատիմանը կը հասցուներն։ Շնորհակալ ենք այն ամեն ազնուասիրտ ազգայիներէն և օտարազգիներէն, որոնք օգնութեան ձեռք կիկնցուցեն մեզ։ Պոլսէն, Անգլիայէն և Պետերբուրգէն Ամենաբարեսիրներ կոչնեն այստեղ պ. Մկրտիչ Ամասյանցի անունը որ չատ յարմար ժամանակին 1500 բուբլի յղեց հեռագրով պ. կամսարականի մէջեցով, այստեղի սովածներուն համար։ Միայն թէ զարմանալին սա է որ օտար երկրի բնակիչներն անգամ վանեցիներու խղճութիւնը տեսնելով գութի կը յարձին, պաղարիւն անգլիացիներն անգամ կը յուզվին, բայց թիւրքաց ոչ տեղական կառավարիչը, ոչ ալ Բ. Դուռը ոչինչ օգնութիւն չեն արած մինչև այժմ սովածներուն և մեռածներ ալ չեն երևիր անել։ Սակիս-փաշան որ Անասորուի Գ. զորաբանակին հրամանատարն է և որ այժմ այստեղ կը գտնվի, չենք գիտեր թէ ինչ պաշտօնով, խոսած էր մի հանգանակութիւն բանալ սովածներուն համար, բայց մինչև ցարդ ոչինչ չէ արած, գոնէ անօթի մնացած թիւրքերուն օգնելու համար։ Հայերը մի մասնաժողով կազմած են այստեղ որոնց մէջ է նաև պ. կամսարական, սովածներուն օգնելու համար։ Այդ մասնաժողովը տեղացի հայերէն որոնք քիչ թէ չատ կարողութիւն ունէին, 1200 բուբլիի չափ հաւաքեց։ Այս նպատակով 800 բուբլիի չափ ալ հաւաքուած էր արդէն տեղացի ազգայիներէն։ Եկեղեցիներուն վրայ ալ պարտք դրուած է այժմ որ եկեղեցւոյ մնուցիչները օգնեն իրենց Թաղին մէջ գտնուած սովածներուն։ Իսկ թիւրքերը չատ անիսամ մնացած են։ մեր հայոց առաջնորդարան կուգան և գթութիւն կը մուրան։ Մասնաժողովը անոնց ալ կօգնէ կարելի եղածին չափ։

Այսչափ թշուառութեան մէջ, վանցի հայերը չեն մոռցած նաև իրենց ազգային վարչական գործերը. ազգային եռանդը չէ սառած նոցա սրտին մէջ։ Վասպուրականի ազգային վարչութեան կրօնական և բաղաքական ժողովները ընտրեցին Սահմանադրութեան համեմատ, տեղի կացիրը ղրկուեցաւ Կ Պոլիս ս. Պատրիարքին։ Այս ժողովներու ընտրութիւնը կեդրոնական վարչութենէն վաւերացուելէ յետոյ՝ Վանի առաջնորդը պիտի ընտրուի գաւառային ընդհանուր ժողովին։ Երեւութիւններուն մեծ մասը մտադիր են Խրիմեան Հայրիկ առաջնորդ ընտրել։ Տեղական ընկերութիւններն ալ նոր եռանդով սկսած են գործել։ մի քանի թատերական ներկայացումներ տրուեցան։ Ն. Վ. «Հայրենասէր» ընկերութիւնն որ Վանի մէջ առաջին անգամ լսարան և կիրակօրեայ վարժարան հաստատած եղած է, կը չարունակէ իւր լսարաններ և կիրակօրեայ դասատուութիւններ։ Նորաբէնի Ուսումնասէր ընկերութիւնն ալ ամբոր մի անգամ իւր լսարան կը բանայ։ Արարք թագի Ազգանուէր ընկերութիւնն ալ վաղը իւր հիմնադրութեան Բ. տարեդարձի հանդէսը պիտի կատարէ չքեղ կերպով։ Այսպէս և ուրիշ չատ ընկերութիւններ։ Այս ընկերութեանց հանդէսներուն չատ անգամ կը ներկայանան նաև անգլիական փոխ-հիւպատոս պ. Կլէյտոն և ռուսական փոխ-հիւպատոս պ. Կամսարական և այնտեղ կատնախօսներ ալ։ Մի ամիսի չափ յառաջ, «Հայրենասէր» ընկ. լսարանի բացման հանդիսի օր պ. Կամսարական հիւանդ լինելով, չէր կարողացեր գալ, բայց հանդէսը պատուած լինելու համար՝ իւր թարգմանը ղրկած էր և մի քաջալերական նամակ ալ գրած էր որ կարդացուած ժամանակ բոլոր ունկնդիրները պ. Կամսարականի համար կեցցէներ պոռալով ոտքերի ծափահարեցին։ Պ. Կամսարականի հիւանդութեան ժամանակ ամեն մարդ անհանգիստ էր. կը ցանկացին ամեն օր հիւպատոսարանէն լուր իմանալ նորա առողջութեան համար։ Պ. Կամսարական իւր բարեսրտութեամբ, անաչառութեամբ, ազգասիրութեամբ և քաղաքացիական հանճարովը այս տեղի ամբողջ ժողովուրդին համակրութիւնը գրաւած և ամեն պասակորդի հայոց սիրելի եղած է։ Հետեւապէս, ամեն մարդ ուրախացած է այժմ, այդպիսի պատուական անձ մը կատարելապէս առողջացած տեսնելով։ Նա չատ անգամ այցելութիւններ կը տայ «Արարատեան» ընկ. վարժապետացին, Սանդրատեան վարժարանին, Վարդի վանոց վարժարանին և ուրիշ վարժարաններու։ Կը լսեմք թէ թիւրքաց վարժարաններն ալ այցելեր է այս օրերս։ Սանդրատեան վարժարանի աշակերտուհիներէն չորս աղքատ օրորդի հագուստը, դասագիրքերը, թաղիք և այլ ամեն գրական պէտքերը կը տոգայ։ Այդ վարժարանին մի քանի կարասիներ ալ նուիրեց։ Օրիորդներու դաստիարակութիւնը չատ խեղճ վիճակի մէջ է այստեղ. քիչաչ սեռը կատարելապէս գերի է բարեն բուն նշանակութեամբ. օրիորդը ամրանի (անխօս) պէտք է ծածկուած է այր մարդոյ առջև խօսելէ. կիները զրկուած է այր մարդոյ առջև խօսելէ. կիները բերանակալ ունեն, մի չորով պատած է իւրանց բերանը։ Այս տեղի քիչաչ սեռի առանձնութեան և գերութեան վիճակը իմացնելու համար՝ բաւական է սա չափ յայտնել թէ կինը իւր մարդուն հետ, մարդը իւր որդուն հետ միասնով սեղանին առջև նստած չեն կարող ճաշել. մինչև անգամ եթէ մի մարդ և մի մանչ զատակ մնացած լինի բնանիրէն, պէտք է որ երկուքն ալ առանձին ճաշեն։ Վանի քիչաչ սեռը այս վիճակէն ազատելու համար՝ օտարաքաղաքացի ուսեալ և ազգասէր տիկիններու առաջնորդութեան պէտք կայ։ Երանի թէ տիկին կամսարական ես այստեղ եկած լինէր և իւր Հայաստանցի քոյրերուն առաջնորդելով, Վանի հայոց ընտանեկան կեանքին մէջ մի նոր յեղափոխութիւն մտցուցէր, իւր խնամքով տակ առնելով այստեղի Սանդրատեան օրիորդական վարժարանը, ինչպէս որ պ. կամսարական կայրատի այստեղի երիտասարդաց մէջ ուսումնասիրութեամբ յառաջ դիմելու եռանդը արծարծել, նոցա ընկերութիւններուն այցելելով։ Կը լսենք թէ պ. կամսարական մտադիր է նաև մի ընկերութիւն կազմելով, գրամասեղան (բանկ) հաստատել այստեղ, աղքատ գիւղացի հողագործներուն օգնելու համար։

Մի քանի տարի յառաջ այնպիսի լուր էր եղած այստեղ թէ պ. կամսարական Բաղէշի (Բիթլիս) հիւպատոս նշանակուած է։ Ամեն մարդ չատ տխրեցաւ, մտածելով թէ արդեօք ինչպիսի մէկը պիտի յաջորդէ պ. կամսարականին Վանի պէս կարևոր տեղ մը որ Հայաստանի ամենէն բազմամարդ նահանգն է։ Վանցիները բարեբաղդ կը համարին գիրենք որ այդ լուրը չուտով սուտ հանվեցաւ։ Վանի բոլոր հայոց փափագն է որ այստեղի փոխ հիւպատոսութիւնը հիւպատոսութեան վերածուի և պ. կամսարական վասպուրականի ընդհանուր հիւպատոս լինի։

Վանցի հայերը բոլորովին յուսահատուած բարենորոգումները գործադրելու համար թիւրքաց կառավարութեան զրկած տեսուչներէն, խնդրագիր առած են անգլիական և ռուսական փոխ-հիւպատոսներուն թէ պէտք է որ եւրոպացիներէ կազմուած մասնաժողով մը գայ Հայաստան բարենորոգումները գործադրելու համար։

Վանէն երկու օրի չափ հեռու գէպի արեւելեան հիւսիս գտնված Պողանդէսէն, Ցաղվերան, Լաչարէն և այլ գիւղեր, ամենը 12 գիւղ, որոց մէջ սարերեր ալ կան, խնդրագիր տուած են Հառաջնորդարանի թէ այդ 12 գիւղերուն վրա մի հայ միւդիր դրուի։ Այս կողմեր ոչ մի տեղ հայ կայմական, հայ միւդիր չը կայ։ Գիշեալ 12 գիւղերին վերին-Ախօռիկ գիւղի հայ բնակիչները գիշերուն փախչելով քաղաք եկան և նահանգապետին յայտնեցին թէ թակորդի Լիսէչին աղա քուրդ բէգը իրենց վրա կը բռնանայ թէ կամ պէտք է իսլամ կրօնը ընդունիք, կամ պէտք է այստի հազար դրուշ տաք ինձի և կամ պէտք է որ ձեր տուն տեղ Թողած, գաղթէք այս գիւղէն։ Նահանգապետի կողմէն այսօր քննիչներ ղրկուեցան Վերին-Ախօռիկ։

ՀՐԱՆՑ

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԻԱՁԱՅԱՑԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆԻ

ՓԱՐԻԶ, 1/13 ապրիլի։ Կարդինալ Նինա յանձնեց ֆրանսիական կառավարութեանը պապի բողոքը մարտի 17-ի հրամանի դէմ։

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 1 ապրիլի։ «С. Петерб. Вѣд.» լրագիրը հաղորդում է, որ կոմս Կոնցիու հրաժարական է տալիս, նրան կը փոխարինէ Ցօտրեան, որի պաշտօնը կը վարի Դրենտոն։ Չուրով թողնում է իր պաշտօնը։ «Herold» լրագիրը հաղորդում է, որ բժիշկ Վէյմարի գործի փրկանալուց յետոյ, կը բռնվի Նիհիլիսա Միխայլովի գործը, որ Մեզենցովի սպանութեան ժամանակ չարագործի կառապան էր։

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 2 ապրիլի։ «Правит. Вѣстн.» լրագիրը հաղորդում է, որ տպարանական գործերի գլխաւոր կառավարութեան կառավարիչ Դրիգորիեվ հրաժարվեցաւ իր պաշտօնից։ Թաղարը ընծայեց նրան ոսկի բեմատոմի տման պատիրով և բրիլիանտներով։ «Herold» հաղորդում է, որ չինական Ջիրում կը կենդրոնացնվին 15 գիւղ օրական նստեր ծովապատ Բուսուսովի հրամանատարութեան տակ։ Նաստարոմի մէջ կը գտնվի Մեծ Իշխան Կոնստանտին Կոնստանտինովիչ։

Կ. ՊՈԼԻՍ, 1/13 ապրիլի։ Մարտի 31-ին սուլթանը ստորագրեց գանձագրութիւն Թիւրքիայի և Զերնոզոնիայի մէջ երկիրները փոփոխելու մասին։

Խմբագիր—Հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ